



## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

- Ծառայության անվանումը՝ Մասնագիտական ծառայությունների մատուցում՝ «Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) Շենքերի էներգետիկ բնութագրերի (ՇԷԲ) նույնական ազգային ստանդարտների մշակում միջազգային ստանդարտների հիման վրա»
- Ծրագիրը՝ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿ/00098348 ծրագիր
- Տևողությունը՝ 6 ամիս
- Վայրը՝ Երևան, Հայաստանի Հանրապետություն

### I. Նախապատմություն

Շենքերի ոլորտը համարվում է Հայաստանում էներգիայի ամենախոշոր սպառողը: Պաշտոնապես հրապարակված էներգետիկ հաշվեկշիռները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունները էներգիայի հիմնական և ամենամեծ վերջնական սպառողներն են, հիմնականում օգտագործվում է բնական գազ և էլեկտրաէներգիա:

Կլիմայի փոփոխության մասին ՀՀ Չորրորդ ազգային հաղորդագրությունը (2020) ըստ կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (ՄԱԿ ԿՓՇԿ), բնակելի, հասարակական և առևտրային շենքերը առանձնացնում է որպես ջերմոցային գազերի արտանետումների հիմնական աղբյուր, դասելով դրանք կլիմայի փոփոխության մեղմման հարցում երկրի առաջնահերթությունների շարքում:

ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 2017թ. հաշվետվության համաձայն, էներգետիկա սեկտորի ընդհանուր ջերմոցային գազի արտանետումների 18%-ի աղբյուրը բնակելի շենքերում վառելիքի այրումն է, իսկ 7% -ը՝ վառելիքի այրումը՝ առևտրային, ինստիտուցիոնալ և հասարակական շենքերում:

ԿՓՓՄԽ (Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խումբ) մեթոդաբանության հիման վրա նշված թվերը չեն ներառում շենքերում էլեկտրաէներգիայի սպառման համար արտադրված ԶԳ արտանետումները: Բնակելի շենքերում էներգիայի վերջնական սպառումը (ԷՎՍ), երկրի ընդհանուր ԷՎՍ (2015-2018թթ.) մեջ կազմում է մինչև 33% - 38%, իսկ առևտրային/ինստիտուցիոնալ ենթակատեգորիայում համապատասխանորեն մինչև 18% - 20%:

Միևնույն ժամանակ, շենքերի ոլորտը ներկայացնում է էներգախնայողության զգալի ներուժ, որը հնարավոր է իրացնել արդի էներգաարդյունավետ (ԷԱ) տեխնոլոգիաների և պրակտիկայի արդյունավետ կիրառման, ՇԷԲ ամուր

սերտիֆիկացման համակարգի կայացման, ռիսկերի նվազեցման քաղաքականության, էԱ վարկավորման ներդրման և այլ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Ինչպես հայտնի է Հայաստանը 2004թ. ընդգրկվել է Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում, և 2006թ. հաստատված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացումը նպատակ ունի նպաստելու Հայաստանի օրենսդրության, նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը Եվրոպական միության չափանիշներին: Այս կապակցությամբ, շենքերի և շինությունների էներգետիկ արդյունավետության բարելավման ոլորտում շատ կարևոր է ուշադրություն դարձնել ԵՄ հրահանգների (դիրեկտիվների) վրա:

Ազգային օրենսդրությունը «Շենքերի էներգետիկ բնութագրերի վերաբերյալ» 2010/31/ԵՄ հրահանգի (ՇԷԲ հրահանգ) դրույթներին մոտարկելու՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ներքո Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը ենթադրում է ճանաչել և խթանել ՇԷԲ ստանդարտների շարքը:

ՀԸԳՀ-ը վավերացվել է Հայաստանի Խորհրդարանի կողմից 2018 թվականի ապրիլի 11-ին, և ՇԷԲ հրահանգի դրույթները կիրականացվեն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, շենքերի էներգետիկ արդյունավետության աստիճանի բարձրացումը և ՇԷԲ սերտիֆիկատների տրամադրումը բխում է «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ հաստատված «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգի» մի շարք դրույթներից:

Այս կապակցությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Քաղաքաշինության կոմիտեն համագործակցելով «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի հետ նախաձեռնել են այդ ոլորտին առնչվող միջազգային ստանդարտների հիման վրա ազգային ստանդարտների մշակման գործընթացը: Ծրագրի 2020-2022թթ. աշխատանքային պլանում ներառված է Միջազգային և Եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակումը:

## **II. Առաջադրանքի հիմնավորումը Ծրագրի նպատակների շրջանակներում**

*ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագրի նպատակն է նվազեցնել ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումները և մասնավորապես, սիստեմատիկաբար նվազեցնել ՋԳ արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից: Ծրագիրը կենտրոնանում է էԱ ուղղված ներդրումների ընդհանուր ռիսկերի նվազեցման վրա շենքերում, որպես ՀՀ-ում էներգիայի հիմնական սպառող սեկտոր:*

Քաղաքականության ռիսկերի նվազեցում բաղադրիչի շրջանակում Ծրագիրը կաջակցի կենտրոնական և տեղական կառավարման մարմինների կողմից ԷԱ արդիականացմանը նպաստող քաղաքականության ծրագրեր ընդունել և իրականացնել: Առևտրային վարկապտուների կողմից ԷԱ արդիականացմանն ուղղված ֆինանսավորման ներդրումային ռիսկերը լուծվելու են քաղաքականության ռիսկերի նվազեցման գործիքների միջոցով, որոնք են՝ արդիականացվող շենքերի համար ԷԱ ստանդարտների և ԷԱ պարտադիր չափորոշիչների արդիականացումը և կիրարկումը, դրանց առնչվող շինարարական նորմերի և ստանդարտների մոնիտորինգը և կիրարկումը, ԷԱ արդիականացում ձեռնարկելու նպատակով բոլոր բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին ֆունկցիոնալ մոդելների և կանոնների տրամադրման համար համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ներդրումը և կիրարկումը, օրենսդրական դաշտի իրականացումը և կատարելագործումը:

ՇԷԲ ստանդարտների արդիականացումը և կիրարկումը կնպաստի արդի շուկայական պայմաններին համապատասխանող և տնտեսապես հիմնավորված կարգավորումների ներդրմանը և, հետևաբար, ներկրվող վառելիքների ծավալների նվազեցմանը, ինչպես նաև ՋԳ արտանետումների կրճատմանը:

### **III. Մասնագիտական ծառայությունների մատուցման շրջանակները**

Մասնագիտական ծառայությունների մատուցման սույն հանձնարարականի նպատակն է ստորև նշված Միջազգային թվով երկու ստանդարտների հիման վրա մշակել ազգային ստանդարտներ՝ ISO/IEC Guide 21-1:2005 միջազգային ուղեցույցով և ՀՍ «1.6-2006 - Ստանդարտացման ազգային համակարգ. Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման կանոններ և մեթոդներ» ազգային ստանդարտով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

- 1. ISO 52000-1:2017 Energy performance of buildings — Overarching EPB assessment — Part 1: General framework and procedures.**
- 2. ISO/TR 52000-2:2017 Energy performance of buildings — Overarching EPB assessment — Part 2: Explanation and justification of ISO 52000-1.**

Մասնագիտական ծառայությունների մատուցման ընթացքում կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները, համաձայն ՀՍ 1.2-2013 «Ստանդարտացման ազգային համակարգի. Ազգային ստանդարտների մշակումը» ազգային ստանդարտով սահմանված հստակ ընթացակարգերի և Ծրագրի պահանջների ապահովմամբ.

- ստանդարտների նախագծերի առաջին խմբագրությունների մշակում,
- ստանդարտների նախագծերի առաջին խմբագրությունների հրապարակային քննարկում,

- մշակված ստանդարտների նախագծերի վերաբերյալ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի կողմից փորձագիտական կարծիքի ստացում և ամփոփում,
- նախագծերի համաձայնեցման ընթացքում ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա փաստաթղթերի լրամշակում,
- ազգային ստանդարտների նախագծերի վերջնական (երկրորդ) խմբագրությունների հրապարակային քննարկում,
- ստանդարտների նախագծերի վերջին խմբագրությունների համաձայնեցում ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի հետ,
- ստանդարտների նախագծերի վերջին խմբագրությունների վերաբերյալ մասնագիտական կազմակերպությունների փորձագիտական կարծիքի ստացում (ցանկը համաձայնեցնել Ծրագրի ղեկավարության հետ),
- ստանդարտների վերջին խմբագրությունների ամփոփում և ներկայացում Ստանդարտացման ազգային մարմին՝ ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացությունների հիման վրա ստանդարտների ընդունման և հրապարակման ապահովում:

#### IV. Հիմնական ակնկալվող արդյունքները

Արդյունքեր		Տևողություն (պայմանագրի ստորագրման ամսաթվից սկսած)	Բյուջե, ԱՄՆ դոլար
1	Միջազգային 2 ստանդարտների տեխնիկական թարգմանություն	1 ամիս	
2	<ul style="list-style-type: none"> <li>- Ազգային ստանդարտների առաջին նախագծերը խմբագրվել են և հանրային քննարկում է կազմակերպվել՝ կարծիքի համար: Ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ստանդարտները լրամշակվել են:</li> <li>- Հանրային քննարկում է անցկացվել Ազգային ստանդարտների երկրորդ խմբագրության նախագծերի վերաբերյալ: Լրամշակված խմբագրությունները ներկայացվել են ստանդարտացման ազգային մարմին՝ ստանդարտները ընդունելու համար:</li> <li>- Ստանդարտների տեխնիկական կոմիտեի հետ համակարգվել են Ազգային ստանդարտների ամփոփման աշխատանքները:</li> </ul>	5.5 ամիս	

3	Մշակված ստանդարտների հիմնական դրույթներն և պահանջները ներկայացվել են շահագրգիռ կողմերին Ծրագրի կողմից կազմակերպված սեմինար-քննարկմանը:	6 ամիս	
---	--	--------	--

**V. Մասնագիտական պահանջներ**

Դիմորդ կազմակերպությունը պետք է ունենա.

- վերջին հինգ տարվա ընթացքում օրենսդրական, նորմատիվ փաստաթղթերի, տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների մշակման փորձ,
- փորձառու մասնագիտական անձնակազմ, մասնավորապես՝
  - Թիմի ղեկավար՝ էներգետիկայի, ճարտարապետության, էներգաարդյունավետության կամ ստանդարտացման ոլորտում առնվազն 10 տարվա համապատասխան մասնագիտական փորձ ունեցող մասնագետ (ներառյալ վերջին 5 տարում ղեկավարած 2 նմանատիպ ծավալի/բարդության նախագիծ)
  - Փորձագետ 1՝ ՋԳՄՕ կամ էներգետիկայի/էներգաարդյունավետության բնագավառում բարձրագույն կրթությամբ և առնվազն 5 տարվա համապատասխան փորձառությամբ (ներառյալ իրականացված 2 նմանատիպ նախագիծ): Շենքերի էներգետիկ բնութագրերի գնահատման, սերտիֆիկացման և էներգետիկ փորձաքննության բնագավառում փորձառությունը կդիտվի որպես առավելություն:
  - Փորձագետ 2՝ Ճարտարապետության, քաղաքաշինության կամ հարակից բնագավառներում բարձրագույն կրթությամբ և առնվազն 5 տարվա համապատասխան փորձառությամբ (ներառյալ իրականացված 2 նմանատիպ նախագիծ): Շենքերի էներգետիկ բնութագրերի գնահատման, սերտիֆիկացման և էներգետիկ փորձաքննության բնագավառում փորձառությունը կդիտվի որպես առավելություն:
  - Երկու տեխնիկական թարգմանիչ (անգլերեն/հայերեն տեխնիկական թարգմանություն)՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ, առնվազն հինգ տարվա մասնագիտական փորձառությամբ, էներգետիկայի, շինարարության կամ հարակից ոլորտի ստանդարտների թարգմանության փորձառությամբ (իրականացված առնվազն երկու նմանատիպ նախագիծ):

**VI. Վճարման պայմանները**

Վճարը կկատարվի համապատասխան պահանջները և առաքվողները ժամանակին ներկայացնելուց և ընդունելուց հետո՝ համապատասխան փաստաթղթերի փաթեթի տրամադրմամբ համաձայն հետևյալ համամասնությանը՝

- Արդյունք 1՝ ընդհանուր գումարի 50%-ի չափով
- Արդյունք 2՝ ընդհանուր գումարի 30%-ի չափով
- Արդյունք 3՝ ընդհանուր գումարի 20%-ի չափով